

գել ցանկալի Արարատիդ վերաբերելի կարևոր  
ազգային արժանաւոր նիւթերն՝ որն որ ես կիմա-  
Նամը նուի քաղաքում:

ՄԿԲՏԻ ՏԵՐ ՅԱԿՈՎՅԱՆՑ.

Ի 25 ՕՀ 1875 թ.

Ի. Ք. Կ. Ե.:

### ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ի պատասխանի Մշակի մէջ երեցած Սաֆրա-  
զեանց պատանւոյ երկու զրութեանց ընդդէմ Ա-  
րարատայ Խմբագրութեան և Ագուլիսի Մովսէս  
քահանոյ Մելիք Ստեփանեանցի վերջինն մինամակ  
ուղած է Խմբագրութեան՝ յիշեալ պատանւոյ  
բարբանջմունքները ցուցանելով, և ըստ օրինի ի  
գատ հրաւիրելով, սակայն Խմբագրութեան այն-  
պիսեաց ոչ կարեռութիւն կըտայ և ոչ նշյալի-  
սի զրաբանութեանց համար ամսագրոյս մէջ զը-  
րութիւն կընդունի և կհրատարակէ:

Աւստի իրաւացի նամակը չարատարակելով հան-  
դիրձ միանգամայն կինդրելիք յիշեալ քահանոյէն  
չըտալ անդպահին պատասխանի, և ոչ այլ միջո-  
ցաց դիմել.

### ՍՈՒՐՃԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

### ՎԵՐՁԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻ ԵՒԾ.

Կյսենք, թէ Բ. Դուռն որոշեր է, որ Հակահա-  
սունեանք՝ Շարգ-Երմէնի Քամօլիկի, իսկ Հա-  
սունեանք՝ Քամօլիկ անուանին, և այս վերջինք՝  
Դարու-Քեահեասի մունենան, Բ. Դրան հետ  
քաղաքական յարաբերութեանց համար:

Դաեւ կը լսեմք, թէ Սամաթիա այժմ Հակա-  
հասունեանց ձեռքը դտնուած Ա. Աստուածածնայ  
եկեղեցին ալ Հասունեանց պիտի յանձնուի, եթէ  
աեդոյն Հասունեանք Հակահասունեաններէն շատ  
են:

Ա. յապէս անմիանալի կերպիւ կրամնուին մեր  
այս ազգայինք, և ե բայց եղբօր դէմ կմնան յա-  
փառնական ատելութեամբ:

Գումզ թ. 809 Յուն 28.

### ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Ընթերցողք զիտեն արդէն թէ այս անուամբ  
ժողով մը հաստատուած է քանի մը շաբաթէ ի  
վեր, որոց երրորդ նիստը գումարեցաւ կիրակի օր ի  
Ս. Լուսաւորիչ եկեղեցին Վալաթից:

Ամեն որ գիտէ թէ մեր Ազգին համար խիստ  
կարեոր էր այսպիսի ժողով մը, որովհետեւ ազգին  
մէջ կարող վարժապետք սակաւամթիւ ըլլալով  
բնականարար Ազգին զաւակունքը մեծաւ մասամբ  
այնպիսիաց ձեռքը յանձնուած են իրը խաղալիկ,  
որոնք լիզուի, և ջուսան վրայ փորձառականէ ըրմ-  
տութիւն չունենալով ըստ քմաց ուսման եղանակ  
մը որոշածին և զայն կը գործածեն, որով և ազ-  
գին զաւակները փոխանակ յառաջադիմելու յի-  
տախաղաց վիճակի մը կենթարկեն:

Ասկէ 10 տարի առաջ սոյն նպատակաւ Վար-  
ժապետական ընկերութիւն մ'ալ հաստատեցաւ,  
բայց ոմանց անփութութեամբը և քիչ մը ազատ  
խօսելով չարակամութեամբը հազիւ քանի մը ա-  
միս շարունակուելէ վերջը, բոլորովին տապալեցաւ  
և վարժապետական ընկերութեան մահը և ազգին  
վարժարանաց յառաջագէմ զարգացմանն համար  
մինչև ցարդ ուսուցման օրինաւոր եղանակ չը կա-  
րենալ մոռածուելուն ցաւալի հետևանքները այդ  
անձանց գատակնիքն ու գատապարտութիւնն ե-  
ղանու երանի թէ սոյն ժողովն ալ առաջնոյն բաղ-  
դին վիճակակից չըլլար և իւր գումարումները  
շարունակելով տակաւ առ տակաւ յաջողէր զիւ-  
րայնել ուսուցման եղանակը:

Վարժապետական ժողովը իւր կիրակնօրեաց  
երրորդ նստին մէջ, ուր ներկայ էին Փոխանորդ  
հայրը, Օսեան և Միսաքեան Էֆէնտիները, և  
100 է շափ ժողովուրդ, ամենայն բարեկարգու-  
թեամբ և օրինաւորութեամբ Նախակրթարանի  
մէջ աւանդելի ուսմանց վրայ վիճաբանելով զբա-  
զեցաւ. վարժապետներէն ոմանք Խառն ժողովոյ  
կողմանէ վաւերացեալ Թաղ. Խորհրդոց հրահա-  
գին ուսմանց ծրագիրն ընդունեցին ոմանք զայն  
յապաւեցին, այլք ստուարացուցին և երկու ժա-  
մու չափ սոյն խնդրոյն վրայ վիճաբանելէ ետև:  
միաձայն հաւանութեամբ օրոշուեցաւ ընդհանուր  
վիճաբանութիւնը թողով մասնաւորութեանցը